ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն.

1) անվանի կոմպոզիտոր, ժողովրդական արտիստ Ալեքսանդր Աճեմյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ.45 հասցեում փակցնելու համար,

2) աշխարհահռչակ օպերային երգչուհի, ՀՀ ժողովրդական արտիստ Արաքս Դավթյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կինյան փողոց հ.10 հասցեում փակցնելու համար.

3) անվանի արձակագիր, գրող, հրապարակախոս, թարգմանիչ Էդուարդ Ավագյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ.48 հասցեում փակցնելու համար,

4) վիրաբույժ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, դոկտոր, պրոֆեսոր Իվան Գևորգյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ամիրյան փողոց հ.8 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կոմպոզիտոր, ժողովրդական արտիստ Ալեքսանդր Աճեմյանը ծնվել է 1925 թվականի օգոստոսի 25-ին, Թիֆլիսում:

1955 թվականին ավարտել է Երևանի կոնսերվատորիան, 1971-1987 թվականներին դասավանդել է նույն կոնսերվատորիայում:

Ալեքսանդր Աճեմյանը հայ երաժիշտներից առաջինն էր, որ սիմֆոնիկ նվագախումբ մտցրեց մարդկային ձայն (սոպրանո), ինչպես օրինակ՝ նրա երկրորդ սիմֆոնիան: Նրա սիմֆոնիկ գործերը կատարել են աշխարհի բեմերում այնպիսի հանրահռչակ նվագախմբերի կողմից, ինչպիսիք են՝ Բեռլինի սիմֆոնիկը և նշանավոր Գևանդհաուսը:

Ալեքսանդր Աճեմյանը ԽՍՀՄ ժողովրդական արտիստներ Վարդան Աճեմյանի և Արուս Ասրյանի որդին է, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Վարդան Աճեմյանի հայրը:

1975 թվականին արժանացել է ՀՀ պետական մրցանակի: 1965 թվականին՝ արվեստի վաստակավոր գործչի, իսկ 1984 թվականին՝ ժողովրդական արտիստի կոչումներին:

Ալեքսանդր Աճեմյանը մահացել է 1987 թվականին:

Կոմպոզիտոր, ժողովրդական արտիստ Ալեքսանդր Աճեմյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ.45 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ քաղաքացի Վարդան Աճեմյանի կողմից:

Աշխարհահռչակ օպերային երգչուհի, ՀՀ ժողովրդական արտիստ Արաքս Դավթյանը ծնվել է 1949 թվականին՝ Տավուշի մարզի Բերդավան գյուղում:

Սովորել է Երևանի Կոնստանտին Սարաջևի անվան երաժշտական դպրոցում:

1975 թվականին ավարտել է Երևանի պետական կոնսերվատորիան: 1975-1986 թվականներին եղել է Երևանի կոնսերվատորիայի օպերային ստուդիայի մենակատարուհի, 1986-1992 թվականներին՝ ՀՀ հեռուստառադիոպետկոմի սիմֆոնիկ նվագախմբի մենակատարուհի: 1996 թվականից դասավանդել է վոկալ՝ Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում: Մինչև կյանքի վերջը դասավանդել է Մոսկվայում:

Հյուրախաղերով հանդես է եկել աշխարհի ավելի քան 120 հեղինակավոր համերգասրահներում:

1987 թվականին արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր արտիստի, 2004 թվականին՝ ՀՀ ժողովրդական արտիստի կոչումներին, եղել է միջազգային մրցույթների դափնեկիր:

Արաքս Դավթյանը մահացել է 2010 թվականին:

Աշխարհահռչակ օպերային երգչուհի Արաքս Դավթյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան փողոց հ.10 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել երգչուհու ընտանիքի կողմից:

Անվանի արձակագիր, գրող, հրապարակախոս Էդուարդ Ավագյանը ծնվել է 1927 թվականի օգոստոսի 19-ին, Թիֆլիսում:

1952 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Աշխատել է «Գիտելիք» ընկերությունում՝ որպես դասախոս: 1953-1954 թվականներին հայոց լեզու է դասավանդել Մոսկվայի գրողների միության կենտրոնական տանը կազմակերպված թարգմանիչների խմբակում: 1954 թվականից աշխատանքի է անցել Հայպետհրատում՝ որպես սրբագրիչ, ապա՝ խմբագիր: Աշխատել է «Սովետական գրող» հրատարակչությունում որպես մանկապատանեկան

խմբագրության ավագ խմբագիր: Եղել է «Արևիկ» մանկապատանեկան հրատարակչության խմբագիր, Երևանի պատմության թանգարանում՝ ավագ գիտաշխատող: 2001-2006 թվականներին եղել է Հայաստանի գրողների միության մանկապատանեկան գրականության մասնաճյուղի նախագահը:

Էդուարդ Ավագյանը հեղինակ է չափածո և արձակ գործերի, գրել է նաև մանուկների համար, մշակել հայ ժողովրդական մանկական բանաստեղծություններ: Արժանացել է Հայաստանի գրողների միության Դերենիկ Դեմիրճյանի և Վախթանգ Անանյանի անվան մրցանակների, «Հայ գրականության բարեկամներ» միության՝ Սիմոն Սիմոնյանի անվան մրցանակի և այլն:

Էդուարդ Ավագյանը մահացել է 2010 թվականին:

Անվանի արձակագիր, բանաստեղծ Էդուարդ Ավագյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ.48 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի և Էդուարդ Ավագյանի դուստր՝ ՀՀ ժուռնալիստների միության անդամ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիա Ավագյանի կողմից:

Վիրաբույժ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, դոկտոր, պրոֆեսոր Իվան Գևորգյանը ծնվել է 1907 թվականի մարտի 28-ին:

1930 թվականին ավարտել է Լենինգրադի բժշկական ինստիտուտը: 1938 թվականից աշխատել է Երևանի բժշկական ինստիտուտում՝ սկզբում ֆակուլտետային, ընդհանուր և հոսպիտալային վիրաբուժության ամբիոնների ասիստենտ, դոցենտ, ապա՝ պրոֆեսոր և ամբիոնի վարիչ: 1954-1956 թվականներին՝ ինստիտուտի ուսումնական և գիտական գծով պրոռեկտոր: 1959-1964 թվականներին եղել է ՀԽՍՀ առողջապահության նախարարության գլխավոր վիրաբույժը:

Իվան Գևորգյանն ավելի քան 230 գիտական աշխատանքների հեղինակ է: Զբաղվել է շատ հազվագյուտ հիվանդության՝ որովայնի քաղցկեղի ուսումնասիրությամբ:

1961 թվականին արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչմանը, պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշ» շքանշանով:

Իվան Գևորգյանը մահացել է 1989 թվականին:

Վիրաբույժ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, դոկտոր, պրոֆեսոր Իվան Գևորգյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ամիրյան փողոց հ.8 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի աշխատակազմի ղեկավար Շ. Դանիելյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հուշատախտակների տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հուշատախտակների տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ